Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2664

1727

1727

4467

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱՐԶՐՀԱՅՏԱՅ ՎԱՆՈՒՑ

ԵՒ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՆՈՐԱՇԵՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՄԱՐԱՆԻ

—

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՑԵՑԱԼ

Ի Հայրապետութենէն Տ. Տ. Գէորգայ Դ. Վեհափառ Կաթուղիկոսէ ամենայն Հայոց

Ի Պատրիարքութենէն Սրբոյ Երուսաղէմի Տ. Եղիշէ արքեպիսկոպոսէ Սրբոյ Յակոբեանց

ԵՒ

Կ. Պոլսոյ Պատրիարք Տ. Մկրտչի արքեպիսկոպոսէ Խրիմեան Այրիկ Եւրեկոսէ

—

1872

ԻՏՊԱՐԱՆԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՑՈՒ Վ. ԻՄԱՑԼԷԹԻ

2664

4407

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ամեն ժամանակ մարդուս կատարելութեան ամենահարկաւոր պարտքն է, անցեալ ճշմարտակար, և թէ օգտակար գործուածները յիշելով ներկային մէջ ուշիուշով ընդունելութիւն ընել, և դուն գործել ապագայ չարիքներու առաջը առնել, և որով կարող ըլլայ կեանքը ապահով խաղաղութեան մէջ պահելու։ Արդ՝ բոլոր ազգեր և մանաւանդ Հայոց ազգը, երեն նախնիքներու բոլոր գործերը յեկեղեցին յիշելն զինի, անոնց անուններն ալ կը յիշատակէ, յօգուտ ներկայ և ապագայ կացութեան։ Եւ մեր նուաստութիւնեալ 1872 յունուար 1 'ի բարձրհայեաց վանս յուխտ և երկրպագութեան գնալով սրբոյ Ցաճարին, պատահեցաւ վանից դրեանց թանգարանին տեսութիւնը ընել, ուստի ձեռքերնիս անցաւ վանից 434 տարուան վանահայրերու և անոնց գործերու ձեռագիր արձանագրութիւնը, և քանի մը աչքէ անցնելն եռոքը, չուզեցինք յիշեալ 434 տարուան պատմութիւնը 'ի մթին մնալ, յիշելով զերախտիս անցեալ վանահարց։ Ըստ բանին թէ՝ զերեխոս բարեկոչն հոմ չի՛ մոռանար։ Վանորոյ ծագկաբաղ ընելով համառօտակի այն տետրակիս մէջ ամփոփելով տուաք 'ի տիպ արձանագրել և 'ի լոյս ընծայել։ Արդ՝ խնդրեմ իւրաքանչիւրս մեր մէկ տետրակ առնել և իմանալ բարձրհայեաց 434 տարուան մէջ եղած գործերը և վանահայրերը, թէ ոյք էին, և ինչ բարեաց յիշատակի գործ ունին։

1872 'ի մայիս 1
'ի վանս բարձրհայեաց
սուրբ Աստուածածնի

Մկրտիչ վարդապետ Ցիլիրանեան
եպիսկոպոս սուրբ Էջմիածնի
Մինաս Մշոյ սուրբ
Կաթուղիկոսի վանքից

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱՐԶԸՐՀԱՅԵԱՅ ՀՐԱՇԱԼԻ ՎԱՆԻՑ

1 Ըստ հին աւանդութեան, սուրբ Տաճարն հիմնեալ լինի 'ի Թադէոսէ յԱռաքելոյն, և անտի մինչև ցամ տեառն 1434 ո՛չ գտանի պատմութիւնն, այլ զի միայն սկսի 1434 յամին պատմել այսպէս։ Բաղիշոյ 'ի պօռ գեղջէ գանձասայ նախաշ Մկրտիչ եպիսկոպոս չինէ զտաճարն գմբեթն քար ու կիր բարձրաբերոյ չինուածով, և 'ի ներքոյ Տաճարին դեռեղէ եօթն բեռ մարտիրոսաց մասունսն, բերեալ 'ի Միւֆարխինու, և զկենացիայտ նշանն բերեալ 'ի կաֆայու (Թէոդոսիայէ) դնէ խոտաճարն և բազմահնար հանճարովն յօրինէ զբազմախաչեայ շուրջառն, և չինէ զսենեակսն զարդարէ և կարգադրէ վանս և վանքանի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

2 Իսկ 1434 էն մինչև 1603 ին չկար շարունակութիւն վանահարց, ուստի՝ ասէ Սրապիոն Կաթուղիկոս Եդեսացի և ոմանք Համիթեցի, զկնի բարձման պարտուց սրբոյ Էջմիածնի և զկնի կրելոյ զվիշտս և զչարչարանս վերադառնայ 'ի նախկին վիճակ իւր Համիթ, և դգրեանս իւր դնէ յիշատակ ի վանուցս Թանդարանն, և վախճանի 1604 ին, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

3 Եւ զկնի սորա յաջորդէ աշակերտն իւր Մշեցի Բարսեղ եպիսկոպոս, վասն սորա և գործոցն բնաւ ոչ յիշատակի իր ինչ յարձանագրութեան, այլ և ասէ յաջորդեաց և վախճանեցաւ։

4 Եւ ապա (ասէ) յաջորդեաց զկնի սորա Արղնցի Թօղոս Ղուկաս Եպիսկոպոս, 1641 և ունի յիշատակ մագաղաթեայ և թղթեայ մեծ ընտիր Աստուածաշունչ գրեանսն և զմի ձայլ պղինձ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

5 Եւ զկնի սորա յաջորդէ Եղիազար վարդապետ Անդապցի, 1647 ին, զխապտեալ տեղիսն նորոգէ, և առ գրան և-

կեղեցւոյն յաւելու զդաւիթն, ուր այժմ թաղեալ կան մարմինք ենչեցելոյ վանահարց, և ապա լի՛ի Պատրիարք, Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ և ապա Կաթուղիկոս Էջմիածնի 1630 ին և առաքէ զբաղում զընծայս յիշատակ որբոյ ուխտին, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

6 Եւ զկնի սորա յաջորդէ Աբէնցի Օհան վարդապետ, աշակերտ Փիլիպպոս Կաթուղիկոսի և առաքի սա 'ի Լոֆ քաղաք Լեհաստան, քանիչ Նիկոլ Եպիսկոպոսի գործոյն և լինի սիրելի յաջողիչոյց, և պատուի բաղում ընծայիւք, իսկ նոյա խանթակամեալ 'ի պատկեր սրբոյ կուսին, և խնդրէ 'ի նոցանէ տալ ինքեան յիշատակ, և նոցա որքան դժկամացեալ 'ի սոյն խնդիր, և դարձեալ 'ի սէր և հիպատիւ նոցա ընդունին. զպատկերն որ 'ի Ղուկաս աւետարանչէ նկարեալ սանն, ուստի բերէ ընդ ինքեան և դնէ 'ի տաճարն յորմէ բաղում հրաշս լինելոյ ազգաւ թէ՝ 'ի Պոլսոյ և թէ յայլ քաղաքաց, բազում զընծայս բերէն և պատուեն զսուրբ պատկերն, ուր մինչև ցայսօր պատուի, և բաղում չինուածս արարեալ Օհան վարդապետի, և մանաւանդ աղբիւրն որ 'ի վերոյ Ամայ ճանապարհին, մինչև ցայսօր Օհան աղբիւր ասի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

7 Եւ յաջորդէ ամիրեցի Սահակ Եպիսկոպոս 1695 ին, և ունի յիշատակ զմարգարտաշար ըղձեսս, և զմագաղաթեայ Աստուածաշունչս և զայլ գրեանս, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

8 Եւ զկ'ի սորա յաջորդէ Սրբոյ անկեալ Աստուածատուր Կաթուղիկոսի աշակերտ Դանիել վարդապետ, և ունի յիշատակ քարեայ չաղարջն, որ այժմ առն լինել աւերակ։

9 Եւ յետ սորա յաջորդէ Պետրոս վարդապետ չինող Սուրբ Նիքայիս եկեղեցւոյ Համիայ, ունի յիշատակ մարմարոտաց արեամբ շաղեալ ճրագարանն, 'ի մամ որոմանց կոյտակի, իսկ լցեալ վառեալ դնեն 'ի խնդանն բարեխօսութեամբ Սուրբ կուսին և Սրբոյ մարտիրոսացն պահպանի

'ի կայծակնահարութենէ, և վախճանի 1759 ին, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

10 Եւ յաջորդէ Բաղիշեցի Յակոբ Եպիսկոպոս աշակերտ Լուսոյ Զաքարիայի ընդ Աբրահամ որդով, սոյն Աբրահամ վարդապետ եղև Եպիսկոպոս և ձեռնադրեաց զԼուսիկ Կարապետն վարդապետ. 1759 ին։

11 Եւ ապա յաջորդէ Աբրահամ Եպիսկոպոս, և յաւուրս սորա հրկիզի մենաստանս, ուստի չինէ Յարչ Իլծոյ, զրաստուց և անասնոց տունն, հանդերձ ըշտեմարանաւք և սենեկաւք, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

12 Եւ յետ այնորիկ յաջորդէ Լուսիկ Կարապետ վարդապետ 1768 ին, և չինէ զհրկիզեալ տեղիսն 'ի հիմանէ, և ձեռնադրի Եպիսկոպոս 'ի Սիմէոն Կաթուղիկոսէ և համատանցի Օհաննէս Պատրիարգ, առաքէ Արապկերոյն զՅոնան վարդապետ Համիայ առաջնորդ, և Լուսիկ Կարապետ Եպիսկոպոս զվանս զատելով Համիայ, Արզնի և Խարբերդի գաւառաց, զվիճակելով վանից և նոսի վանահայրն և իւրանձնական դրամն 12500 դահեկան ծախս առնելով չինէ ըղխախանան, և զարդարէ կահիւք և կարասեաւք, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

13 Եւ զկնի սորա յաջորդէ Համիայեցի Թէոդմէճեան Սահակ Եպիսկոպոս և պատահի սով և մահ և լիութեամբ կերակրոյ պահէ զմիաբանութիւնն և յետ սովուն, ձեռնարկէ 'ի լինութիւն եկեղեցոյ և սենեկաց, և 'ի Թէոդմահեայէ բերէ աղճապատս (քեռչի չինի) որով եկեղեցոյ սրմանն չինէ և զարդարէ, հոյակապ Առաջնորդարան կանգնէ, և բոլոր սենեակսն սիւռոցաւ կահ և կարասեաւք զարդարեալ պատրաստէ ուխտաւորաց, յետայնորիկ կազմէ արձանագրութեան տամարն, և զետեղէ վերոյ յիշեալ վանահարց անուանս 'ի մամ 1800 ին և յետ բաղում բարեկարգութեանց արարելոյ նորա վախճանի և ամփոփի առ դրան Սուրբ Եկեղեցւոյ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

14 'ի տեղի սորա յաջորդէ Սահմեան Կարապետ վարդա-

պեան և չինէ զխախտեալ տեղիս ինչ՝ և ունի զմի սենեակ յիշատակ իւր, և մեկ արծաթեայ ջահս գնեալ 'ի Համթայ Սուրբ Կիրակոս Եկեղեցւոյ, և վախճանի 1823 ին որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

15 Եւ յաջորդէ Օհաննէս վարդապետ Կիւմիւշխանեցի սա ևս զխախտեալն նորոգէ տեղիս ինչ սենեկաց և ունի զսենեակ իւր յիշատակ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։ վախճանի և Թաղի առ դրան Սուրբ Եկեղեցւոյ։

16 Եւ ապա յաջորդէ Օհաննէս վարդապետ Սեբաստացի և սա ևս շէն պահելով զվանս ունի յիշատակ զսենեակ իւր և զայլ յիշատակ, և վախճանի և ամփոփի առ դրան Սուրբ Եկեղեցւոյ 1840 ին։

17 Միաբանք անմիաբան դոլով բերին և զԴովկիացի Յակոբ Եպիսկոպոսն և դնեն վանահայր, և չունելով յիշատակ և դարձեալ գնայ Եւդոկիայ, որոյ երթալն օրհնութեամբ եղիցի։

18 Յաջորդէ զկնի նորա Համթայ Առաջնորդ Յակոբ Եպիսկոպոսն, 1844 ին, և 'ի հիմանէ կառուցանէ զկրկնայարկ սենեակսն վանք Միաբանաց, և 'ի Սահակ Եպիսկոպոսէ չինեալ վերնատունն բանայ և որոն որ 'ի ներքոյ նորա 'իվերս առնու և պայծառանայ Եկեղեցին, և քանի զարարս այս գնէ և հրաժարի 1846 ին և գնայ Համթի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

19 Եւ զկնի նորա յաջորդէ Օհաննես Սեբաստացի վարդապետն սորա կացեալ ժամանակ ինչ չունելով յիշատակ օրհնութեան և գնայ 'ի Սեբաստիայ որոյ երթալն օրհնութեամբ եղիցի։

Այսմ նուագի վիճակայինք յուսակտուր եղեալ 'ի ձեռաց անյիշատակ վանահարցս, ուստի դիմեն 'ի վանս Մակաբայեցւոց և բերին Օհաննէս վարդապետ Տիգրանակերացի տէր Պողոսեան և հաստատեն վանահայր 1848 ին։

20 Օհաննէս վարդապետ Տէր Պողոսեան, երկու ամ կացեալ սորա չինէ զբոլոր չորս ամեայ խախտեալն չինուածոց

և ընդ դրչեամարանոցն ցօրենով և այլ պարեղենօք բաւական երկու տարւոյ կերակրոյ վանից։ միաբանութեանց և ուխտաւորաց և յետ այնորիկ յաւել ևս ըստանայ 17000 դրշի 24 կտոր զարտորայս (թարլայ) վան հողագործութեան հաստատ 24 կտոր հիւճճէթիւ 'ի ձեռն Գրիգոր վարդապետի Տիգրանակերացւոյ Սահակեան, որոց տեղի անունը ախոռներ կոչին, և յետ այնորիկ յաւելու 'իգանձանակն 3500 դրշ պատրաստ դրամ, և այլ արծաթեայ մանրունք յուխտաւորաց հաւաքեալ, ահաւասիկ սորա և նորա նախորդ վանահարց հաւատարմութիւնն 'ի խորհրդածութեան առնել կշռոշ ապդասերք, կարեն զյարդ սորա և նոցա լաւագոյն իմանալ և այլն։

Եւ այնմ ժամանակի միաբանք չ'տանելով սորին հաւատարմութիւն յարուցանեն խռովութիւնս, ուստի' լաւ համարեալ նորա կատրմի հաց, երթալ 'ի վանս Մակաբայեցւոց ուսել խաղաղութեամբ և վարել զպաշտօնն, քան թէ ի խռովութեամբ նստիլ ի սեղան զարդարեալ ևայլն։

Վանորոյ կամովինՀրաժարի և գնայ 'ի վանս Մակաբայեցւոց։

Եւ վիճակայինք հանդերձ յոյն ուսատաղաչի Տիմոթէի ազգայիւ դրեն մահսեր հաւատարիմ միաբան Արժանապատիւ Գրիգոր վարդապետ Սահակեան, և Ակիլ գիւղաքաղաքի աւագ տէր Նիկողոս քահանայիւ քանի երևելի անձամբ յղեն և խնդրեն ժամ յառաջ զվերադառնալն ի պաշտօն իւր իսկ նորա առեալ զմահսերն, գրէ զպատասխանին այս պէս։

Գրիգորս ըստեղ 'ի Բաղաքրիւն կոչաց և ՝ն 'ի Բաղարիւն, զի 'ինքն չէր հաստատամրիւան ընդանիւ եւ Բաղարայ յոյժ, արդ՝ 'ի հրաժարիլն մեր ընդ Բաղարիւն, ուստի անհնարի այսմ տիրոջն իւր զբարդառնալ 'ինքն։

21 Յաջորդէ ևս Համթայ Առաջնորդ Յակոբ Եպիսկոպոս 1850 ին, և բանայ վարժարանս և ժողովէ տասնի չափ զաղգայս և տայ կրթել և 'ի միջոցին այնմիկ, կիսոյ չափ նորոգի Մատենաւ եկեղեցին, և զկէօլֆիկունն նորոգ կառու-

ցանի, և հրաժարի գնայ Յակին 1853 ին, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

22 Օհաննէս վարդապետ տէր Պօղոսեան յաջորդէ պեռատիւ և կոնդակաւ 1857 ին, և սկսի զաւերական չինել և գիշերեալ պարսան վճարել, վարդապետեան թարբերթցի Գոմբու Օհան քէհեայի և քառասուն հաղար ղուրուշ իւր անձնական դրամն ծախելով կարգադրէ վանս, և ընու ղշտեմարանն, և հերկել ղհողս, և պտտահի սոլ 1863 ին, կերակրէ առատօրէն զմիաբանութիւնս և զուխտաւորս և օտարականս, և վիճակային մասնաւոր ղաղքատն, և սկսի զ'որ չինուածն չինել։

1 Յառաջին տարին, որ նստաւ վանահայր 1857 ին, 'ի մէջ եկեղեցոյ վերնատան յատակն ապառաժ վէմք գոլով զայն ամենայն կռանաւ և վառութիւ մարէ 'ի ձեռն քարահատից և գործաւորաց լման երկու ամիս, և ըստացոյց զանդին և պոյծառացաւ տեսք եկեղեցւոյն, բաղում աշխատութեամբ և ծախիւք դրամիցն։

2 Եւ զկոտորեալսն 'ի քարանց յապառաժ վիմացն, հաւաքեալ չինէ ի հիմանէ զսենեակս որոյ դուռն և մի լուսամուտն յարևելս, միւսն 'ի հարաւայիս հայի։

3 Սոյն սենեկին կից, Կիրակոս վարդապետի յանուն սենեակն միանգամայն աւերք ըլլալով նորեն չինեալ 'ի հիմանէ մեծ և փառաւոր դեղեցիկ յոյժ։

4 Առաջի ջրհորին մերձ եւս չինել զնոր մեծ ջրհորմի, առնչի, սրբատաշ քարամբ յատակն և զորմն, և բաշխել առատապէս զբարեհամ ջուրն միաբանաց և ուխտաւորաց, բառնալով զպատճառ ծարաւակրութեան յաւուր ամարան ուխտաւորաց և միաբանից։

5 Ի վերոյ սոյն ջրհորն չինէ զմի մեծ սենեակիսկ երկու լուսամուտ, միանգամայն կոփածու քարամբ։ որոյ լուսամուտքն մինն հիւսիս միւսն ընդ յարևելս հայի, փառաւոր ամարանաց։

6 Առ դրան Սուրբ եկեղեցոյ չինէ, եվանգ ընդարձակ, ուր ժողովուրդն յետ արձակման յեկեղեցւոյն անդ հանդիստ առեալ նստին հայել 'ի լոյնածաւալ դաշտն Արզնու և բանակցին ընդ սիրազուն բարեկամսն։

7 Սոյն էջվանիս մէջ, երկու սենեակս լուսամուտք հանդերձ չինէ, որոյ լուսամուտքն հային 'ի հիւսիս 'ի պարտեզն, և յարևելս և 'ի յարևմուտս։

8 Նա և 'ինեղ ճանապարհաւ դէպի յարևմուտս չինէ սենեակիսկ չքեղ, որոյ լուսամուտն հայի 'ի հիւսիս պարտեզն միւսն 'ի դուռն վանիցս։

9 Եւս սիրեալ 'ինոր ջրհորն մինչև ցվերջ, սենեկի ներքեւն չինէ հաստատիւն որմովք և սրբատաշ քարամբ պայծառ լոյն կամարօք ընդարձակ տեղի դրատուց և անուանոց, որոյ արտաքին տեսքն չինուածոյն իրրև զպարիսպ հոյակապ քաղաքաց ցուցանէ 'ի դաշտն ճանապարհորդաց և 'ի վանս եկող ուխտաւորաց 'ի հիացումն կարդեալ։

10 Եւ չինէ չորս սենեակս, մին երկու կամարակապ լուսամուտք, միւս երեքն միով կամարակապ լուսամուտք ուր չորեքկին լուսամուտքն հային 'ի հիւսիս իրարատեղն յանուն վանմոյուք Միսաքեան զարմին հիմանց կառուցեալք։ յիշատակ նոցունց սերնդոց։

11 'Ինեքեայ յիշեալ չորից սենեկաց սկսեալ արտաքոյ դրանէ մինչև ցիսահերանոցն չինէ լոյն և ընդարձակ կոփածու քարամբ հաստատ որմովք և կամարօք տեղի դրատուց և տեսք նորա իրրև զպարիսպ երևի 'ի դաշտն։

12 Եւս և չինէ երկու սենեակս քայքայեալսն 'ի հիմանէ, հաստատ որմովք և լուսամուտք որոյ ասին, զաղանցոյ և տէր Աղաուրի սենեակ, և չինէ զմի թանատուն, ուր հարսն զմածուսն և հանեն զիւղն։

13 Յետուստ առաջնորդարանին Սեբաստիայոյ քէօշկ անուն անշուք տեղն, 'ի հիմանէ կիրու քարամբ չինէ զմեծ սենեակն 30 դերանաւ։ ուր բազմութիւն ուխտաւորաց նստին և առջին սրբատաշ քարամբ էջվանմբ, և մերձ ասրա փոքր սենեակ մը։

14 Վեմաշուք Միսաքեանց սենեկաց վերայ, չինէ 23 գերանաւ մեծ և փառաւոր սենեակմը յանուն Ուրհատոց և Սաղակ Եպիսկոպոսէ չինեալ առաջնորդարանի, 36 հատ գերանան փտեալ գոլով, 36 գերանաւ նորոգէ, և յառաջագոյն տախտակեա փայտի չինեալ կամարն սրբատաշ քարամբ չինէ, որ ընդ յարևելս հայէր՝ 'ի մէջ այնր բարձու սրահին, չինէ երկուս սենեակս կամարակապ լուսամուտք վանդակաւ, որոց դրունքն հային 'ի հիւսիս, լուսամուտքն մին յարևելս միւսն 'ի հիւսիս։

15 Եւս երկու սենեակ կից միմեանց չինէ, սրբատաշ քարամբ և կամարակապ վանդակաւ լուսամուտք դեղեցիկ, և զմի փառաւոր կամարակապ վանդակաւ լուսամուտմը խոհերանոցին, և զխոհերանոցն կրկնապատկեաց մեծութեամբ, 'ի դիւրութիւն ուխտաւորաց առանձին կերակրոցն, և սրահմ մեծ սրբատաշ քարամբ և կամարաւ, վասն ձմերան դարման տանելոյ տանեացն, 'ի դիւրութիւն որ հայի 'ի հիւսիս։

16 Եւս երկու մեծ ըշտեմարանս դարոյ և ցորենոյ, մեծամեծ սալ քարամբ, և արտաքին դրան ներսի կողմն ստորերկրեայ քարեայ ըշտեմարանմը ցորենոյ և 'ի վերայ նորա սենեակմը դռնապանին և մշակաց չինէ, և 30 կանգուն երկարութիւն միոյ օրմին, և 10 կանգուն միւսոյն չինէ քարուկրով հաստատուն որոց միջի սենեակմը մեծ, և քիլերմի որոյ երկարութիւն է 30 կանգնոյ չափ, լուսամուտքն հային, մին յԱրևելի, միւսն Հարաւոյ ճանապարհին 1870ին։

17 Հին գինետան որմն միանգամայն խախտեալ գոլով քակէ և մղէ երկու կանգուն դուրս և չինէ քարեկրօք, և անդ չինէ չորս սենեակս, լուսամուտք որք հային 'ի պարտեզն հիւսիս, և արտաքոյ վանից կից պարսպին չինէ մեծ մառան մը ուր դնեն նիւթք դիւրավառելիք այսինքն յարդ, խոտ, փայտ, ձմերան և ամարան տեղի գրաստուց ուխտաւորաց։

18 Եւ չինէ՝ զճանապարհն ապառաժուտ վեմն վառութիւ և կռանաւ խորտակեալ սկսեալ յԱրևելոյ վերի թաղն, մինչև ցվանս, բայց տակաւին ևս կայ տեղիս ինչ դժուարին հարթ և հաւասարել իդիպոզ ժամու։

19 Բացի վերոյ յիշեալ 37 չինութենանց, 17000 ղուրուշի հող կառնու յառաջին վանահայրութեան 1844ին, և 4700 ղուրուշ այսմ երկրորդ վանահայրութեան։ միանգամայն լինի 12700 ղուրուշի կալուած, այս անգամի արտորայքն են Պէյնուռ-ղանկի, և նալչանտ Պողոսի և առաջինն ախոռներ, անջնջելի յիշատակք յաւիտենից, և իւր անձնական դրամն 40000 ղուրուշ բացի եկամտից ծախս արարեալ է։

20 Եւ յայս միջոցս հաճութիւն տուեալ մեզ կանգնել զդիլերութիւն Ճեմարանն յօգուտ ապագայ Հայ սերնդոց։

Արդ՝ արտաքոյ վանից ունի չինք 'ի վիճակս իւր, զմի ժամատուն և զվարժարան 'ի Փոյ-ղի գիւղն, զմի ժամատուն 'ի Հիլոռ գիւղն, և զմի ժամատուն 'ի Փէրռ գիւղն, և յԱրքի զմի վարժարան, և զվարժապետի, միանգամայն իւր քսակեն հոգալով ղծախսն, և Ամէ գիւղաքաղաքի եկեղեցոյ չինութեան ձեռնտու լինի 7300 ղուրուշ և բաղում աշխատութիւնս ղոհելով։

Սհատաւիկ նախորդ վանահարց, որպէս տեսանի իրաքանչիւրոց, մի կամ երկու յիշատակօք պատկեալ, և ոմանց ընաւ ոչինչ, միայն անձնական քսակին ծառայեալ, իսկ՝ սա որպէս յոյսանի տեսաք մեք աչօք, և տեսանէ աշխարհ ամենայն, որք հանդիպին 'ի վանս, թէ ուխտաւորաց տրօք և թէ իւր անձն սկսանեն, օ՛չ խնայեաց վանից չինութեան և պիտոյից, վասնորոյ ասեմք, յիշատակ նորաօրհնութեամբ և գովութեամբ եղիցի յաւիտեանս յաւիտենից ամէն։

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԻՇԵԼ ՎԱՆՔՈՒ

Վարդապետս ծնանի 1806 թուականին փրկչիս 'ի Տիգրանակերտ, և մկրտի 'ի սուրբ Կիրակոս յեկեղեցւոյ, և անուանի Թովմաս, և զարգացեալ կրթի ընդ ձեռամբ ծնողի իւրոյ Տէր Պողոսի բարեկրօն քահանայի, և էր աղօթասէր և խնամասէր։ միշտ սիրեր Եկեղեցիս մնալ և ընդ խաղասէր գիտնականն կենցաղավարել, և ունէր 'ի բերան զնարեկն և զՍաղմոսն միշտ յաղօթս, ուստի ցանկացեալ կրօ՛ ուսրութեան և գնայ ի վանս Մակարայեցոց մնայ միա-

բան, ևՃՀՌՆԱԳՐԻ Վարդապետ ի Տէր Յովհաննէս Սրբ Եպիսկոպոսէ առաջնորդէ Բռնավանու, և անուն Թուխման վերադրիէ Օհաննէս, և յետ երից ամաց վարդապետութեան նորա լուեալ զհամբաւ հաւատոյ Հայաստանեաց Առաջնորդի տեառն Օհաննու վարդապետի Սեբերեկոյ, և յաստուկ հրաւիրանօք բերէ 'ի վանս և կարգէ զնա լուսարար, և յետ այնորիկ անցանի 'ի կարգս վանահարց և Առաջնորդաց և չինէ զվանս մինչև ցայսօր որպէս տեսանի ի անառակիս ասա, բոլոր գործք նորա չարագրեալ մինչ ցայսվայր, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Սրդ՝ զայս ամենայն տեսանելով մեր, առաջարկեցաք նմա զՃեմարանիմը դիշերօթիկ չինութեան խորհուրդն, և իբրև գտաւ ընդունելութիւն զառաջարկութիւն մեր, ուստի նորին խորհրդով և աջակցութեամբ բոլոր միաբանաց, ձեռնարկաք 'ի չինութիւն, եթէ տեր յաջողեսցէ և կամիցի, քանզի զլեալ է, էթէ ոչ թէր չինէ զրուն ինանէր վարդապետն չինոցէ նորա Լայն։

—

ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԴԱՆՈՆՆԵՐՔ ՀԵՏԵՒԵԱԼՔՆ ԵՆ

Կանոն Ա. Ճեմարանը եկող տղայն պիտի գիտնայ հասարակ գրել կարդալ և տարիքը 12 — 13 և 14 տարեկան և մաքրոյ կողմանէ անարատ և ողջ պիտի ըլլայ։

Կանոն Բ. Ցգան եկած օրէն լման չորս տարի պիտի մնայ Ճեմարանին մէջ և մինակ տարին երկու անգամ կրնայ տունը երթալ սեպտեմբերը 15 ին կերթայ, հոկտեմբերի մէկին կուգայ, միւսը աւագ երկուշաբթին կերթայ, նոր կիրակին կուգայ։

Կանոն Գ. Որիշ ժամանակ ալ, հայրը և մայրը և ազգականները կրնան վանքը գալ Ճեմարանի վերակացուի հրամանաւը տեսութիւն մը ընել, վերակացուի սենեկին մէջ և ոչ օտարներուն հետ։

Կանոն Դ. Վանքից ուխտաւորք եթէ փափագին Ճեմարանը տեսնելու, մինակ կիրակի օրը վերակացուի հրամանաւ կրնան տեսնել, առանց նստելի խօսելու։

Կանոն Ե. Վանքից միաբանք, թէ վարդապետք թէ վերակացուք եւայլն, եւայլն, Ճեմարանը երթալու կամ նստելու թոյլատուութիւն չ'կայ։

Կանոն Զ. Ճեմարանը տղայոց պիտի սորվեցընէ, Հայերենի մէջ. Քերականութիւն, Ճարտասանութիւն, Տրամաբանութիւն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Եկեղեցագրութիւն, Կրօնագիտութիւն, Քրիստոնէական, Հայոց և Աղթոց պատմութիւն, Բազմավարութիւն։

Տաճկերէնի մէջ. Լեզուն, Ընդ, Աբուէ, Շերուէ որէ (Կիւլիւսթան) Թեհվիէ վէհդ Թիւրուբ, Օսմանեան տերութեան օրինաց կանոնները, քաղ Գրագրութիւն, Ցերմանի և Պարսկերէն ընթերցմունք։

Կանոն Է. Ճեմարանն տղայոց պիտի տայ օրը երեք անգամ կերակուր, առաւոտն նախաճաշիկ, ժամ վեցին ճաշու կերակուր, երեկոյին ընթրիք. ասկէ 'ի զատ պիտի տայ դասաբերք, կաղամար, գրիչ, մելան, գրելու թուղթ, ուսուցիչ, կառավարիչ, պահապան, սպասաւոր և ութ օրը անգամը վրանին և գլուխին լուանալ, և գիշերը ճրագի լոյս, եւայլն։

Կանոն Ը. Ցգան դալած օրը հետը պիտի բերէ, տէօշէկ, բարձ յանկողին, երեսարձ, 2 չարշաֆ սպիտակ եաթաղին մէջ փաթաթելու, 3 շապիկ, 3 վարտիք, 3 ինչիք, և 3 փէշկիր, 3 մարհամայ սպիտակ որ միշտ մաքրութեան մէջ պիտի մնան։ Այսնք առնելը դալուն առեր հետը կբառնի, քանզի իրենէ։

Կանոն Թ. Ճեմարանը միշտ բաց մնալու և յառաջ երթալու համար Համիդ խարբերդի և այլ մտա եղած քաղաքաց մէջ հինգ պատասուր անձանցմէ հոգաբարձութեան ժողովը պիտի գրուի, որոյ անդամոց անունքն, և տարեկան արդիւնքին լրագրաց մէջ պիտի հրատարակուին։

Կանոն Ժ. Հոգաբարձուաց ժողովոյ պաշտօնն է, Ճեմարանի ծախուց և եկամտիցը հսկել և եկամուտներ գտնալ և հաստատել. և Ճեմարանը զրկուելիք տղոց արժանաւորութեան վրայօք հաւանութիւն տալ, և տղոյին տիրոջը հարկ եղած պահանջքը ծանուցանել և առնուլ, և իրենց վիճակաւոր գրով յուզարկել որ ը'գտնուի։

Կ-ՆՈ ԺԱ. Ճեմարանի կարգադրութեան և կանոնների գործադրութեան վարժապետաց, սպասաւորաց փոփոխութեան, աշակերտաց ընդունելութեան և արտաքսման, հսկողութիւնը և պաշտօնը, Ճեմարանի վանից մէջ ժողովոյ նախագահինէ, և ոչ ումեք,

Կ-ՆՈ ԺԲ. Ճեմարանի եկամտից և ծախուց և այլ վերաբերելեաց արձանագրութեան տումարը միշտ բացուած կը-կենայ Ճեմարանին այցելութեան եկող պատուաւոր անձանց որևիցէ խնդրողաց,

—

ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ ՃԵՄԱՐԱՆԻՆ

Ա. Տղայոց ննջարանն երկար սենեակմէ, որուն մէջ ամեն մէկ աղային համար տախտակէ մէկ դառնոցայ, այսինքն թախտի պէս պառկելու տեղ շինուածէ իրարմէ երկու թզաչափ հեռի, երկու կարգ դիմացէ դիմաց որոց մէջ տեղը երկու ծերունի մինն այր միւսն կին, իբրև խնամատար դիշերուց'ի գլուխ պիտի նստին և հսկեն աղայոց վրայօք, և կանթեղները վառ մնալով մինչ 'ի լոյս, և դուրսէն որ և իցէ մարդ՝ բաց ի երկուց ծերունի յիշեալ խնամատարներէն ննջարան՝ի աղոց մէջ չ'պիտի մնայ, կամ ննջէ, որոց գործնէ ցերեկն ննջարանը մաքրել, դիշերը հսկել արթնութեամբ,

Բ. Ամեն մէկ աղայի ննջարանի գլխու վերևը գրուած կայ շամանն, մոմ, քիսրլիթ, ջուր և ջրի դաւաթ (գաւաչ) կաղամար, գրիչ և թուղթ, և դասագիրք, որ դիշերն մնացածինը գրէ և կարդայ,

Գ. Առաջին զանգակի ձայնը լսելուն պէս աղաքը մէկէն կելլեն կը հագուին և կը լուացուին և կը սանտրուին կընուտին ամեն մէկը իրեն ննջարանին վերայ, դասերնուն վրայ դիտողութիւն կնեն մինչև Եկեղեցոյ կոչնակն հնչուի, կոչնակին ձայնը լսելուն պէս ամենը մէկէն իրենց վարժարանի զգեստովը կիջնեն յեկեղեցին, (վարժարանի զգեստնէ մէյ մէկ խորունկ մանի դունով, ֆէրաճէ, լոդիկ որ տասիկոյ Ճեմարան՝ը կուտայ,

Դ. Յեկեղեցւոյն ելնելուն պէս չիտակ Ճեմարանը ամեն մէկը իւր դրասեղանին վերայ կուգայ կընստի մէկ ժամ և կէս սերտողութեան դասերնուն կըպարապին և ապա մէկ ժամ և կէս ալ դաս առնել և նոր դասին վրայ նայել ժամը կելլայ երրորդ,

Ե. Ժամ երեքին կիջնեն սեղանատունը լման կէս ժամ նախաճաշիկ կընեն, և այդ կէս ժամու մէջ Աստուածաշունչի ընթերցմունք պիտի լինի պատմութեամբ, սոյն դահլիպլթին ընելէն ետքը զանկին ձայնովը կըդոհանան կելնեն Ճեմարանին մէջ իրենց տեղը կընստին,

Զ. Կէս ժամ սերտողութիւն, մէկ ժամ գիր գրել, և ասկեց ետքը մէկ ժամ և կէսնալ երկրորդ դասատուութիւն այլեայլ գրեանց և'պատմութեանց, ժամը կելայ վեց,

Է. Զանգակը կհնչուի աղայք կիջնեն սեղանատունը, կէս ժամ կերակուր և Աստուածաշնչի պատմութիւն, ապա կելլեն մէկ ժամ պըտըտիլ, դրօսնուլ, ուրախանալ և անմեղ խաղերով պարապիլ, ժամը կելայ եօթնուկէս,

Ը. Զանգակի ձայնովը կելլեն Ճեմարանն, կէս ժամ տաճկերէն սերտողութիւն, մէկ ժամ դասատուութիւն մէկ ժամ գրագրութիւն, կէս ժամ ընթերցմունք կանոնաց, եղև ժամ տասն և կէս, ուստի կոչնակի ձայնին կիջնեն յեկեղեցին և յեկեղեցին աւարտելէն զկնի կէս ժամ ալ երեկոյի ընդ՝իք, և ապա զանգակի ձայնիւ միանգամայն կուգան Ճեմարանը դասի սերտողութիւն և գրութիւն և ընթերցմունք մինչև ժամ երեք դիշերոյ, և ապա 'ի ննջարան կը՝հրաւիրուին, ննջարանին մէջ աղոթքին ընելով խաղաղութեամբ ննջել,

Արդ կմնայ ամեն մարդ իր առաջին ընտիր յիշատակը աչխարհս մէջ և մանաւանդ իր կողմանէ Աստուծոյ նուիրելիք ընծայն, իր զաւակը պիտի ըլլայ, պէտք զաւակը կամ եղբայրը զրկել այս Ճեմարանը, որ ընդ հովանեաւ ամենօրհնեալ տուրբ Աստուածածնայ տաճարինէ,

Վերայ յիշեալ Ճեմարանի ծախքը և աշխատութիւնները

եթէ մէկը խորհրդածութեան առնելու ըլլայ, լաւ պիտի իմանայ ինչ քան ծանր ծախուց և աշխատութիւններու պետք ունենալը, և վանիցն ալ այժմեայ եկամուտներն ալ բոլոր ուխտաւորաց և վիճակաւոր յայտնի է, որ թէ վանից միաբանութեան և թէ խախտեալ շինքերու տարեկան նորոգութեան չ'բաւելը, ասացելոցս վկայ են մեզմէ եկող վանահայց եկամտից և ծախուց հաշուատումարները և թղաթնու պարտքը և չինուածոց ճեռացած խախտեալ տեղերը որ մեր նուաստութիւնը վճարեց և նորոգեց մեր անձնական դրամքն, որ այս բանիս համար խորութիւն չունիմ, վասն զի ես նուաստս բոլորովին վանուցն եմ։ այս մինակ ըսել կուզեմ որ դարձեալ ժողովրդոցս տրօք և աղաչոց տիրուանքներու որոշեալ նուիրօք, և արթուն հոգաբարձութեամբ մեր և Գեր. Տիգրանեան Մկրտիչ Արք Եպիսկոպոս Սրբազանէոր։

Պիտի շարունակուի և պահպանուի եթէ Տէր յաջողեսցէ, վասն զի, էրէ ու Տէր պահեսցէ ընդունայն գէնն պահապանք նորա։ Բայց՝ ազգասիրութեան և կատարեալ մարդկութեան բարի հոգի և սիրտ ունեցողք թէ աղայք և էֆէնտիք, թէ իշխանք և թաղիանք և թէ էֆնտիք և էֆնտիք պաշիք, բոլորովին անտարբեր պիտի չմնան իրենց արդար վաստակոց տրօքը պատկելու ճեմարանս նպատակը, զի որով՝ ինչից թէ ներկայիս և թէ ապագային մեծամեծ ազգային օգուտներ պիտի քաղուին, 'ի պարծանս հայազգութեան և բոլոր քրիստոնեայ եղբարց և մանաւանդ աշակերտաց հայրերուն և ազգականներուն, ուրեմն կ'յուսամք ուր ուրեք ասոյն տեսակը կարդացուելիք ըլլայ, ապարդիւն չ'պիտի ելնէ, 'ի փառս Աստուծոյ և 'ի պատիւ հայազգութեան։

Ողջ լերուք։

Ն. Առաջնորդ և վանահայր
Բարձրահայեաց Սրբոյ ուխտին։
Յովհաննէս Վրդապետ
Տէր Պետրոսեան Տիրոնակերոյն

1372
'Ի վանս Բարձրահայեաց
ՅԱրղնի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1 Դիշերօթիկ Ճեմարանի ներքին և արտաքին կանոնները։

2 Սկսեալ 1434 տարուն ազգի եկող վանահայրերու անունքն և գործքերնին։

3 Տէր Պօղոսեան ճգնաղէաց Օհաննէս ծայրագոյն վարդապետի տան և եօթը ամեայ վանահայրութեան գործքերը։

4 Ցիշեալ վանահոր ծնունդը և ղարդանալը։ վարդապետ ձեռնադրուիլը։

ՀԱՅԿ ԱՍԱՅՐԱՅՍ
ԷՋՄԻԱՆՑԻ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ